

**Ժամ-Ֆիլիպ Տուսեն**

**Ս Ե Ր Ա Ն Ե Լ**

**Վ Ե Պ**

**Թարգմանիչներ՝  
Կարինե և Ալեքսանդր Աղաբեկյաններ**



**Գ Ի Տ Ա Ն Ք  
Երևան 2012**

Ouvrage publin avec le concours du Service de la Promotion  
des Lettres de la Communaut  franaise du Belgique

**Jean-Philippe Toussaint, Faire l'amour**

**ՏՈՒՆԵՆ, ԺԱՆ-ՖԻԼԻՊ**

**ՍԵՐ ԱՆԵԼ** – Վեպ, Եր.: Գիտանք, 2012, 84 էջ.

Վեպը տասներեքերորդ գիրքն է *XXI դարի արձակ* մատենաշարի, որը ներառում է տարբեր ազգերի ներկայումս ստեղծագործող լավագույն գրողների երկերի հայերեն թարգմանությունները: Վեպի հեղինակը բելգիացի հայտնի գրող է, բազմաթիվ գրական մրցանակների դափնեկիր (Prix Victor Rossel 1997, Prix Mndicis du roman franais 2005, Prix Dncembre 2009): Վեպը թարգմանվել է 16 երկրներում:

Սիրո ցավոտ վախճանի պատմություն է. սիրո, որը չի ցանկանում ավարտվել:

«Եվ ամեն անգամ այս երեկոների ընթացքում Փարիզում և Տոկիոյում մենք սեր էինք անում. առաջին անգամ Փարիզում, ինչպես առաջին անգամ, և վերջին անգամ Տոկիոյում, ինչպես վերջին անգամ:

Բայց քանի՞ անգամ էինք միասին սիրով զբաղվել իբր վերջին անգամ: Չգիտեն, հաճախ: Հաճախ...»:

**ISBN 978-9939-810-16-4**

. 2002 by Les Editions de Minuit

. Գիտանք, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2012

## Ձմեռ

### 1

Ես մի սրվակ ծծմբաթթու լցնել տվեցի և միշտ մոտս էի պահում՝ մտադրվելով մի օր շփել ինչ-որ մեկի երեսին: Բավական կլիներ բացել գունավոր ապակե սրվակը, որի մեջ առաջ ջրածնի գերթթվուտ էր եղել, շփել աչքերին և փախչել: Ջարմանալի թեթևություն զգացի, երբ ձեռք բերեցի ոսկեգույն քայքայիչ հեղուկով այդ սրվակը, որը սուր համ էր տալիս կյանքիս և գրգռում միտքս: Բայց Մարին գուցե հիմնավոր երկյուղով իրեն հարցնում էր՝ կարո՞ղ է պատահել, որ այդ ծծմբաթթուն ի վերջո հայտնվի հենց իմ աչքերում: Կամ էլ իր՝ շաբաթներ շարունակ լացակունած դեմքին: «Չէ, Մարի՛, չեմ կարծում», - հերքում էի մեղմ ժպիտով և առանց հայացքս նրանից հեռացնելու ձեռքով նրբորեն շոյում էի սրվակը բաճկոնիս գրպանում:

Առաջին անգամ դեռ չէինք համբուրվել, երբ Մարին լաց եղավ: Տաքսիում էինք. ավելի քան յոթ տարի առաջ. նա նստած էր կողքիս ինքնաշարժի կիսախավարում. նրա արտասովաթաթախ դեմքով սահում էին Սենայի ափի թափառող ստվերները և հանդիպող ինքնաշարժների դեղին ու սպիտակ ցուլարձակ լապտերների լույսերը: Այդ պահին մենք դեռ չէինք համբուրվել, նրա ձեռքը դեռ չէի բռնել, սիրո ամենաչնչին խոստովանություն իսկ չէի արել (իսկ երբևիցե նման խոստովանություն արե՞լ եմ). հուզված ու շփոթված նայում էի Մարիին՝ նրան տեսնելով այդպես լաց լինելիս իմ կողքին:

Մի քանի շաբաթ առաջ նույն տեսարանը կրկնվեց Տոկիոյում, բայց այս անգամ մենք առմիշտ բաժանվում էինք: Մենք չէինք խոսում տաքսիում, որը մեզ տանում էր Շինյուկուի մեծ հյուրանոցը, որտեղ իջևանել էինք նույն առավոտյան. Մարին լուռ լաց էր լինում կողքիս. հեծկտում էր ու կամացուկ գկռտում ուսիս, մատների կտրուկ շարժումներով սրբում էր արցունքները՝ թախծի խոշոր արցունքները, որոնք տգեղացնում էին իրեն ու ծորեցնում թարթիչների ներկը. մինչդեռ յոթ տարի առաջ՝ մեր առաջին հանդիպման ժամանակ, դրանք փրփուրի պես թեթև իսկական հրճվանքի արցունքներ էին, որոնք ինքնաբուխ հոսում էին այտերով: Տաքսին գերջեռուցված էր, Մարին, շոգից նեղվելով, իրեն վատ զգաց և ի վերջո դժվարությամբ հանեց իր երկարափեշ սև կաշվե վերարկուն՝ կողքիս գալարվելով ինքնաշարժի հետևի նստատեղին,

դեմքը ծռմռելով և ասես ինձնից դժգոհելով, թեև ես ոչ մի մեղք չունեի, որ այդ անտեր տաքսիում այդքան շոգ էր. նա կարող էր բողոքել վարորդին, որի անունն ու լուսանկարը փակցված էին կառավարման վահանին: Նա հրեց ինձ, որպեսզի վերարկուն տեղավորի մեր միջև նստատեղին, հանեց գործված վերնազգեստը, փաթաթեց ու դրեց կողքին: Այժմ նրա հագին միայն չհարդարված ու ճմռթված սպիտակ վերնաշապիկ էր, որի տակից երևում էր սև կրծկալը, և որը թեթևակի դուրս էր եկել տաքատի գոտու տակից: Մենք չէինք խոսում. կիսախավարում ինքնաշարժի ձայնասփյուռից անընդհատ ծորում էին ճապոնական աշխույժ ու անծանոթ երգեր:

Տաքսին մեզ իջեցրեց հյուրանոցի մուտքի մոտ: Յոթ տարի առաջ Մարիին առաջարկեցի գնալ մի բան խմելու դեռևս բաց որևէ տեղ Բաստիլի մոտակայքում. չեմ հիշում, թե որ` Լապ, Լարոկետ, Ամելո կամ Պադե-լա-մյուլ փողոցներից մեկում: Գիշերով երկար ժամանակ քայլեցինք, շրջեցինք թաղամասում սրճարանից սրճարան, փողոցից փողոց, Սեն Լուի կղզու մոտ հասանք Սենի ափը: Այդ գիշեր մենք միանգամից չհամբուրվեցինք: Ո՛չ, ոչ միանգամից: Բայց ո՞վ չի սիրում երկարացնել այդ սքանչելի պահը, որ նախորդում է առաջին համբուրյին, երբ երկու էակ, որոնք սիրո ինչ-որ հակվածություն են զգում միմյանց հանդեպ, արդեն լուռ որոշել են համբուրվել. իրենց հայացքները դա գիտեն, իրենց ժպիտները դա կռահուն են, իրենց շուրթերն ու ձեռքերը դա նախազգում են, բայց իրենք դեռ երկարածգում են շուրթերը առաջին անգամ քնքշորեն իրար հպելու պահը:

Տոկիոյում մենք անմիջապես բարձրացանք մեր սենյակ. անխոս հատեցինք ամայի ընդարձակ մուտքասրահը, որը լուսավորված էր բյուրեղապակյա ջահերով` շլացնող ջահերի եռյակով, որոնք հենց այն պահին, երբ մտնում էինք հյուրանոց, մեր աչքերի առաջ սկսեցին թեթևակի օրորվել` միմյանց նկատմամբ եկեղեցու զանգերի պես տարուբերվելով, մեր վերևում դանդաղ թափահարվելով և ապակու ու բյուրեղապակու զրնգոց արձակելով, որն ուղեկցվում էր աղետավոր ընդերքի` գետինը դողացնող և պատերը տատանող անտանելի հռնոյունով. իսկ հետո, երբ ալիքն անցավ, դեռևս շարժվող ջահերը, լույսը առաստաղին թարթեցնելով և մի պահ հյուրանոցը ընկղմելով մթության մեջ, տարածամանակ կրկին վառվեցին մուտքասրահում ու գրավեցին իրենց տե-

ղը, ինչը ուղեկցվում էր իրենց անշարժությունը հետզհետե վերագտնող ապակե հազարավոր թափանցիկ փայլվիլուքների հակադարձ դողդոջ-յունով: Հյուրանոցի մուտքասրահը ամայի էր, դատարկ վերելակը դան-դաղ բարձրանում էր ներքին բակի պատով, մենք կողք կողքի լուռ կանգնած էինք թափանցիկ խցիկում. Մարին՝ կաշվե վերարկուն ու գործված վերնագգեստը թևին զցած, լացակունած նայում էր ջահերին, որոնք շարունակում էին կայունանալ այդ այնքան թույլ երկրաշարժի վերջում, որ ինձ հարց էի տալիս, թե գուցե դա մեր սրտերում է եղել: Հարկի միջանցքը լուռ էր ու անվերջ. բաց դարչնագույն գորգահատակ, դեռ անաչ թողնված սենյակի սպասարկման սկուտեղ՝ ուսելիքի ցի-րուցան մնացորդներով, կեղտոտ ափսեին թեք զցած սրբիչ: Մարին քայլում էր առջևից՝ ուսերը կախ, թևերը ցած զցած, մի ձեռքը քսելով միջանցքի պատին: Ես դեռ անաչ միացա նրան և մագնիսական քար-տը խցկեցի բանալու անցքը՝ սենյակ մտնելու համար: Եվ ամեն անգամ այս երեկոների ընթացքում Փարիզում և Տոկիոյում մենք սեր էինք ա-րել. առաջին անգամ Փարիզում, ինչպես առաջին անգամ, և վերջին անգամ Տոկիոյում, ինչպես վերջին անգամ:

...Ես շարունակում էի լռել հեռախոսախցիկում, իսկ Մարին ինձ պատ-մում էր, որ հյուրանոցի սենյակում մե՛կ շատ շոգ է, մե՛կ էլ սառնամա-նիք, որ վաղուց հրաժարվել է փորձերից՝ մի բան հասկանալու այդ տարօրինակ սարքից, որ կարգավորում է սենյակի ջերմաստիճանը, և հագնվում կամ հանվում է՝ ըստ դրա փոփոխականության և կարգավոր-ման, հետո ավելացրեց, որ մի գիշեր արթնացել էր սրթսրթալով, և քա-նի որ չէր կարողացել վերագործարկել անջատված ջեռուցումը, բացել էր բոլոր պահարանները, հանել վերմակներն ու ներքնակները և խա-ռնիխուռը զցել մահճակալին. գիշերվա երեքին սենյակում այնքան էր սառել, որ ստիպված էր եղել գործված վերնագգեստ, վզոց ու կիսա-գուլպաներ հագնել անկողին վերադառնալուց առաջ: Եվ եղել էին պա-հեր, երբ սենյակում շոգեբաղնիք էր, ինքը ստիպված էր հանվել սենյակ մտնելուն պես, իրերը սեղանին դեռ չդրած արծակել վերնաշապկի կո-ճակները, ցնցուղ ընդունել և ոտաբոբիկ քայլել գորգահատակին՝ հյու-րանոցի պատկերանշանը կրող լայն սպիտակ խավազգեստով. և, չնա-յած դրան, կուրծքը շուտով փայլում էր քրտնքից, ազդրերն ու թևատա-կերը թացանում էին շոգ ու խոնավ սենյակում, իսկ լուսամուտը բացել միշտ անհնար էր. ի վերջո, երբ շոգը անտանելի էր դառնում, հանում էր

նույնիսկ խավազգեստը և խելագարի պես լրիվ մերկ շրջում սենյակում ծաղիկների ու թռչունների խոլորձների հոտով հագեցած մթնոլորտում: Մոտենում էր լուսամուտին՝ մի շունչ ծուխ ներքաշելով ծխախոտից, որի շիկացած ծայրը կարմրատակում էր խավարում, և անշարժ կանգնում այնտեղ՝ գիշերվա մեջ նայելով քաղաքի նեոնե լույսերին, որոնք թարթում էին իր առջև: Մերկ կանգնած հյուրանոցի տասնվեցերորդ հարկի ապակե լուսամուտախորշի մոտ, մարմնի վրայով սահող ընդհատուն կարմիր ճառագայթներով և էլեկտրական ցայտուն արտացոլումներով, որոնք շերտավորում էին հոլանի մաշկը, նա վերընթերցել էր իմ ուղարկած հեռապատճենը և նստել սեղանի մոտ՝ նամակ գրելու: Նա նամակ էր գրել մեծ ապակե լուսամուտախորշի մոտ, որն իշխում էր քաղաքի վրա, ինձ մի քանի տող էր գրել հյուրանոցի սպիտակ ձևաթերթին, սիրո նամակ էր ինձ գրել:

- Քեզ սիրո նամակ եմ գրել, ի՛մ սեր, - ասաց նա:

Յեռախոսախցիկից դուրս եկա ցնցված, սիրոս ճմլված, անսահման երջանիկ ու դժբախտ: Հինգ բոպե էի նրա հետ, և այլևս չգիտեի, թե ես ով եմ, նա ինձ խելքահան արեց, բռնեց իմ ձեռքից ու մեծ արագությամբ պտտեցրեց, մինչև որ խաթարվեց աշխարհի իմ ընկալումը, զգայարաններս խուճապի մատնվեցին և շարքից դուրս եկան, իմ բոլոր կողմնորոշիչները խառնվեցին: Քայլում էի ցոտաշունչ գիշերվա մեջ և չգիտեի՝ ուր եմ գնում, նայում էի ջրանցքի մութ ջրի փայլին և տապալված էի հակասական, սրված, անտրամաբանական մղումներից: Գետափի երկայնքով ձգվող ծառուղիում նստեցի նստարանին, վերարկուի գրպանից հանեցի ծծմբաթթուն և մտախոհ նայում էի ձեռքիս մեջ հայտնված սրվակին: Փորձում էի դիմադրել Մարիի հանդեպ ունեցած զգացմունքներիս ուժգնությանը, բայց պարզ էր, որ արդեն ուշ է, նրա հմայքը նորից ներգործել էր, և ես զգում էի, որ ևս մեկ անգամ թողնելու եմ ինձ ներքաշել այս, եթե ոչ հոգեկան պառակտման ու ողբերգության, ապա կրքի հորձանուտը: